# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

Բացակա էին՝ Արգիշտի Մեխակյանը, Լյուդվիկ Յայլոյանը, Սեդա Գրիգորյանը, Արմինե Մեսրոպյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Շողիկ Պողոսյան, Նելլի Պետրոսյան, Անուշ Գալստյան, Սարգիս Խանոյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վարազդատ Անտոնյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Առաքելյանը**

Լսեցին

***ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Ա/

Լսեցին

***ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Տիգրան Արայի Գևորգյանի 2024 թվականի օգոստոսի 21-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի վարչական տարածքում գտնվող, Տիգրան Արայի Գևորգյանի սեփականությունը հանդիսացող՝ 04-021-0097-0074 ծածկագրով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող 1.0 հա հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողերի կատեգորիայի՝ գյուղմթերքի պահպանման / սառնարան/ կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի փոխարինողի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն օտարել աճուրդային կարգով՝ համաձայն հավելվածի:
2.Մասնակցության վճարը՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ: Նախավճարը՝ մեկնարկային գնի 50 %-ի չափով: Սահմանափակումներ չկան:
3.Հողատարածքի յուրաքանչյուր լոտի համար յուրաքանչյուր քայլը սահմանել մեկնարկային գնի նվազագույնը 5 %-ի չափով:
4.Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթներ՝ օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121-Ա/

Լսեցին

***ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N 80-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի փոխարինողի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Խոյ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գեղակերտ գյուղի վարչական տարածքում գտնվող L=378.7մ, L=698.5մ և L=1362.2մ և d=159մմ L-12մ, d=76մմ L-15մ, d=57մմ L-351.7մ, L- (1-14) =378.7մ: d=76մմ L-107մ, d=57մմ L-337.3մ , d=133մմ L-10մ, d=89մմ L-8մ, d=76մմ L-336մ, d=57մմ L-563.9մ, L- (1-54) =1362.2մ: d= 133մմ L-21մ, d=108մմ L-31մ, d=89մմ L-35մ, d=76մմ L-154.56մ, d=57մմ L-457մ, L-(1-37)=698.56մ գազատարը անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու « Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ շահագործման նպատակով:

2.ՈՒԺԸ կորցրած ճանաչել Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 10-ի <<Խոյ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին>> թիվ 80-Ա որոշումը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ա/

Լսեցին

***ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 39-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի փոխարինողի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Խոյ համայնքի սեփականության իրավունքով պատկանող Արշալույս գյուղի վարչական տարածքում գտնվող Ճյուղ 1 երկարությունը=1410,6մ, տրամագիծը=76մմ երկարությունը=545,4մ, տրամագիծ=89մմ երկարությունը=463,5մ, տրամագիծ=108մմ երկարությունը=330,1մ,տրամագիծը=159մմ, երկարությունը=39,3մ, տրամագիծը=219մմ երկարությունը=32,3մ:Ճյուղ 2 երկարությունը=422,6մ տրամագիծը=89մմ, երկարությունը=360,3մ, տրամագիծը=219մմ երկարությունը=14,9մ, տրամագիծը=159մմ, երկարությունը=12,7մ,տրամագիծը=133մմ,երկարությունը=34,7մ: Ճյուղ 2-1,երկարությունը=319,5մ, տրամագիծը=219մմ,երկարությունը=30,9մ,տրամագիծը=57մմ, երկարությունը=260,9մ, տրամագիծը=89մմ, երկարությունը=27,7մ: Ճյուղ 2-2 երկարությունը=318,3մ, տրամագիծը=159մմ,երկարությունը=20,3մ,տրամագիծը=76մմ,երկարությունը=297,98մ:Ճյուղ 2-3 երկարությունը=251,6մ, տրամագիծը=219մմ, երկարությունը=27մ, տրամագիծ=89մմ,երկարությունը=224,6մ:Ճյուղ 3 երկարությունը=377,5մ, տրամագիծ=108մմ, ե րկարությունը=37,5մ, տրամագիծը=89մմ, երկարությունը=340մ գազատարը անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ շահագործման նպատակով:

2.ՈՒժը կորցրած ճանաչել Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 12-ի <<Խոյ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին>> թիվ 39-Ա որոշումը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ա/

Լսեցին

***ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՀԵԿ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և համայնքի ղեկավարի փոխարինողի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի սպասարկման համար թեթև մարդատար LADA 210740 մակնիշի փոխադրամիջոց ձեռք բերելու նպատակով հատկացնել 2100000 /երկու միլիոն հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ա/

Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասով.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջեի 2024 թվականի երկրորդ եռամսյակի կատարման մասին հաշվետվությունը ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 125-Ա/

Լսեցին

***ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի երրորդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետութան օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 06-Ա որոշումը, բնակիչներից ստացված դիմումները և համայնքի ղեկավարի փոխարինողի առաջարկությունը.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Սահմանել անշարժ գույքի հարկի տույժերի գծով արտոնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 126-Ա/

Լսեցին

***ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով, հիմք ընդունելով իրավական, սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը, սոցիալական աշխատողի կատարած մոնիթորինգը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի անապահով բնակիչների կողմից ներկայացված դիմումները և համայնքի ղեկավարի փոխարինողի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127-Ա/

Լսեցին

***ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով,հիմք ընդունելով 2024 թվականի սեպտեմբերի 3-ի Սոֆիա Միրզախանյանի և 2024 թվականի հոկտեմբերի 3-ի Լուսինե Գրիգորյանի դիմումները և համայնքի ղեկավարի փոխարինողի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Խոյ համայնքի ավագանու անդամ Սոֆիա Միրզախանյանին՝ «Ամեն ինչ քո ձեռքերում է» դրամաշնորհային ծրագրի համար հատկացնել 200000/երկու հարյուր հազար /ՀՀ դրամ գումար:
2. Խոյ համայնքի ավագանու անդամ Լուսինե Գրիգորյանին՝ «Խոյ համայնքի կանանց ֆորում» դրամաշնորհային ծրագրի համար հատկացնել 100000/մեկ հարյուր հազար/ՀՀ դրամ գումար:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128-Ա/

Լսեցին

***ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասիի 42-րդ կետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով , հիմք

ընդունելով Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի Գրիգոր Յուրայի Սարգսյանի 2024 թվականի հուլիսի 7-ի դիմումը և համայնքի ղեկավարի փոխարինողի առաջարկությունը.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի բնակիչ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնկայի ինստիտուտի «Համակարգչային ճարտարագիտության»մասնագիտության բակալավրական կրթական ծրագրի հեռակա ուսուցման 2-րդ կուրսի ՀՏՏ220 ակադեմիական խմբում՝ վճարովի համակարգում սովորող Յուրա Գրիգորի Սարգսյանին,՝ուսման վարձի համար տրամադրել 120000/մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ ֆինանսական աջակցություն և փոխանցել ԲՈՒՀ-ի բանկային հաշվեհամարին:

2. Ֆինանսական աջակցության վճարումը կատարել Խոյ համայնքի բյուջի սոցիալական ֆոնդի միջոցների հաշվին:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 129-Ա/

Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասով.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջեի 2024 թվականի երրորդ եռամսյակի կատարման մասին հաշվետվությունը ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 130-Ա/

Լսեցին

***ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի <<ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 168- Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի առաջին մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի փոխարինողի առաջարկությունը՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 168-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131-Ն/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԷԴԳԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Խոյ համայնքի ավագանու կանոնակարգի դրույթներով, հաշվի առնելով այն փաստը, որ Խոյ համայնքի ավագանու կողմից գումարված 2024 թվականի առաջին նստաշրջանի նիստերից և քվեարկություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի ծանուցմամբ ներկայացված ժամկետում Էդգար Համբարձումյանի կողմից չի ներկայացվել համապատասխան փաստաթղթերը, ավելին՝ Խոյ համայնքի ավագանու նիստերից բացակայելու պատճառների մասին Էդգար Համբարձումյանը երբևէ չի տեղեկացրել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ինչն արձանագրվել է նաև գումարված նիստերի վերաբերյալ կազմված ավագանու նիստերի արձանագրություններում.

***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու կողմից 2024 թվականին գումարած առաջին նստաշրջանի ընթացքում 2024 թվականի փետրվարի 13-ի, մարտի 15-ի, ապրիլի 12-ի, հունիսի 21-ի, հունիսի 26-ի ավագանու նիստերից ու քվեարկություններից Խոյ համայնքի ավագանու անդամ Էդգար Համբարձումյանի բացակայությունները համարել անհարգելի:

Կողմ-0 Դեմ-12 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 132-Ա/

Լսեցին
***ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Արթուր Իլյուշայի Վարդանյանի 2024 թվականի հոկտեմբերի 8-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի վարչական տարածքում գտնվող, Արթուր Իլյուշայի Վարդանյանի սեփականությունը հանդիսացող 04-021-0253-0008 կադաստրային ծածկագրի, 0,299 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակությունը փոխադրել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության՝ ջերմոց կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 133-Ա/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԳՈՒՐԳԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Խոյ համայնքի ավագանու Խոյ համայնքի ավագանու կանոնակարգի դրույթներով, հաշվի առնելով այն փաստը, որ Խոյ համայնքի ավագանու կողմից գումարված 2024 թվականի առաջին նստաշրջանի նիստերից և քվեարկություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի ծանուցմամբ ներկայացված ժամկետում Գուրգեն Գրիգորյանի կողմից չի ներկայացվել համապատասխան փաստաթղթերը, ավելին՝ Խոյ համայնքի ավագանու նիստերից բացակայելու պատճառների մասին Գուրգեն Գրիգորյանը երբևէ չի տեղեկացրել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ինչն արձանագրվել է նաև գումարված նիստերի վերաբերյալ կազմված ավագանու նիստերի արձանագրություններում.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու կողմից 2024 թվականին գումարած առաջին նստաշրջանի ընթացքում 2024 թվականի մարտի 15-ի, ապրիլի 12-ի, մայիսի 17-ի, հունիսի 21-ի, հունիսի 26-ի ավագանու նիստերից ու քվեարկություններից Խոյ համայնքի ավագանու անդամ Գուրգեն Գրիգորյանի բացակայությունները համարել անհարգելի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 134-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՍԵԴԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Խոյ համայնքի ավագանու կանոնակարգի դրույթներով, հաշվի առնելով այն փաստը, որ Խոյ համայնքի ավագանու կողմից գումարված 2024 թվականի առաջին նստաշրջանի նիստերից և քվեարկություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի ծանուցմամբ ներկայացված ժամկետում Սեդա Գրիգորյանի կողմից չի ներկայացվել համապատասխան փաստաթղթերը, ավելին՝ Խոյ համայնքի ավագանու նիստերից բացակայելու պատճառների մասին Սեդա Գրիգորյանը երբևէ չի տեղեկացրել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ինչն արձանագրվել է նաև գումարված նիստերի վերաբերյալ կազմված ավագանու նիստերի արձանագրություններում.

***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու կողմից 2024 թվականին գումարած առաջին նստաշրջանի ընթացքում 2024 թվականի փետրվարի 13-ի, մարտի 15-ի, ապրիլի 12-ի, մայիսի 17-ի, հունիսի 21-ի, հունիսի 26-ի ավագանու նիստերից ու քվեարկություններից Խոյ համայնքի ավագանու անդամ Սեդա Գրիգորյանի բացակայությունները համարել անհարգելի:

Կողմ-12 Դեմ-3 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 135-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐՄԻՆԵ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Խոյ համայնքի ավագանու կանոնակարգի դրույթներով, հաշվի առնելով այն փաստը, որ Խոյ համայնքի ավագանու կողմից գումարված 2024 թվականի առաջին նստաշրջանի նիստերից և քվեարկություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի ծանուցմամբ ներկայացված ժամկետում Արմինե Մեսրոպյանի կողմից չի ներկայացվել համապատասխան փաստաթղթերը, ավելին՝ Խոյ համայնքի ավագանու նիստերից բացակայելու պատճառների մասին Արմինե Մեսրոպյանը երբևէ չի տեղեկացրել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ինչն արձանագրվել է նաև գումարված նիստերի վերաբերյալ կազմված ավագանու նիստերի արձանագրություններում.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու կողմից 2024 թվականին գումարած առաջին նստաշրջանի ընթացքում 2024 թվականի փետրվարի 13-ի, մարտի 15-ի, ապրիլի 12-ի, մայիսի 17-ի, հունիսի 21-ի, հունիսի 26-ի ավագանու նիստերից ու քվեարկություններից Խոյ համայնքի ավագանու անդամ Արմինե Մեսրոպյանի բացակայությունները համարել անհարգելի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 136-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐԱՅԻԿ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Խոյ համայնքի ավագանու կանոնակարգի դրույթներով, հաշվի առնելով այն փաստը, որ Խոյ համայնքի ավագանու կողմից գումարված 2024 թվականի առաջին նստաշրջանի նիստերից և քվեարկություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի ծանուցմամբ ներկայացված ժամկետում Արայիկ Պարսամյանի կողմից չի ներկայացվել համապատասխան փաստաթղթերը, ավելին՝ Խոյ համայնքի ավագանու նիստերից բացակայելու պատճառների մասին Արայիկ Պարսամյանը երբևէ չի տեղեկացրել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ինչն արձանագրվել է նաև գումարված նիստերի վերաբերյալ կազմված ավագանու նիստերի արձանագրություններում.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու կողմից 2024 թվականին գումարած առաջին նստաշրջանի ընթացքում 2024 թվականի մարտի 15-ի, ապրիլի 12-ի, մայիսի 17-ի, հունիսի 21-ի, հունիսի 26-ի ավագանու նիստերից ու քվեարկություններից Խոյ համայնքի ավագանու անդամ Արայիկ Պարսամյանի բացակայությունները համարել անհարգելի:

Կողմ-12 Դեմ-2 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 137-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՇՈՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Խոյ համայնքի ավագանու կանոնակարգի դրույթներով, հաշվի առնելով այն փաստը, որ Խոյ համայնքի ավագանու կողմից գումարված 2024 թվականի առաջին նստաշրջանի նիստերից և քվեարկություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի ծանուցմամբ ներկայացված ժամկետում Աշոտ Սահակյանի կողմից չի ներկայացվել համապատասխան փաստաթղթերը, ավելին՝ Խոյ համայնքի ավագանու նիստերից բացակայելու պատճառների մասին Աշոտ Սահակյանը երբևէ չի տեղեկացրել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ինչն արձանագրվել է նաև գումարված նիստերի վերաբերյալ կազմված ավագանու նիստերի արձանագրություններում.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու կողմից 2024 թվականին գումարած առաջին նստաշրջանի ընթացքում 2024 թվականի փետրվարի 13-ի, մարտի 15-ի, ապրիլի 12-ի, մայիսի 17-ի, հունիսի 21-ի, հունիսի 26-ի ավագանու նիստերից ու քվեարկություններից Խոյ համայնքի ավագանու անդամ Աշոտ Սահակյանի բացակայությունները համարել անհարգելի:

Կողմ-12 Դեմ-2 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 138-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՌՈԲԵՐՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Խոյ համայնքի ավագանու կանոնակարգի դրույթներով, հաշվի առնելով այն փաստը, որ Խոյ համայնքի ավագանու կողմից գումարված 2024 թվականի առաջին նստաշրջանի նիստերից և քվեարկություններից բացակայելու պատճառների վերաբերյալ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի ծանուցմամբ ներկայացված ժամկետում Ռոբերտ Հովսեփյանի կողմից ներկայացվել է համապատասխան փաստաթղթեր՝ բացատրագիր 2024 թվականի 1-ին նստաշրջանի գումարված ավագանու նիստերից բացակայության հարցը հարգելի համարելու վերաբերյալ, ՄՎԿ հայկական կարմիր խաչի ընկերության «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ կողմից 2024 թվականի հոկտեմբերի 1-ի ներկայացված թիվ 192 և թիվ 193 տեղեկանքները, չնայած որ Խոյ համայնքի ավագանու նիստերից բացակայելու պատճառների մասին Ռոբերտ Հովսեփյանը երբևէ չի տեղեկացրել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, ինչն արձանագրվել է նաև գումարված նիստերի վերաբերյալ կազմված ավագանու նիստերի արձանագրություններում.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու կողմից 2024 թվականին գումարած առաջին նստաշրջանի ընթացքում 2024 թվականի փետրվարի 13-ի, ապրիլի 12-ի, մայիսի 17-ի, հունիսի 21-ի, հունիսի 26-ի ավագանու նիստերից ու քվեարկություններից Խոյ համայնքի ավագանու անդամ Ռոբերտ Հովսեփյանի բացակայությունները համարել հարգելի:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 139-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ԶԵԿ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական տարածքում 2025 թվականի համար տեղական տուքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական տարածքում 2025 թվականի տեղական վճարների, ինչպես նաև օրենքով չներառված տեղական վճարների տեսակները եվ դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 140-Ն/

Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի փոխարինող առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 25 տարի ժամկետով համաձայն հավելվածի:

2. Մասնակցության վճարը՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:
Նախավճարը սահմանել նախնական գնի 5 %-ը: Սահմանափակումներ չկան:

3. Հողատարածքի յուրաքանչյուր լոտի համար յուրաքանչյուր քայլը սահմանել նախնական գնի նվազագույնը 5 %-ի չափով:

4. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթներ՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 141-Ա/

Ավագանու անդամներ
ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ԷԴԳԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՖԻԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՐԱՅԻԿ ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼԻԶԱ ՌԱՊՅԱՆ

ԱՇՈՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Համայնքի ղեկավարի փոխարինող*

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՆՏՈՆՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Աննա Առաքելյանը _____